Հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի տնօրեն, պ.գ.թ.,
դոցենտ Գ. Իսկանդարյան
07.11.2025թ.

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի 2025թ. նոյեմբերի 3-ին կայացած թիվ 4 նիստի:

ԲԱԺՆԻ ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Լ. Հովսեփյանը, բաժնի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Հ. Ստեփանյանը, գիտաշխատողներ Ա. Հովհաննիսյանը, Կ. Սահակյանը, Տ. Մանուկյանը, կրտսեր գիտաշխատողներ Վ. Թորոսյանը, Թ. Աղամալյանը:

ԼՍԵՑԻՆ. Նարեկ Միքայելի Մարտիրոսյանի «Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը 1908-1915թթ.» (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Խաչատյան) թեկնածուական ատենախոսության համար առաջատար կազմակերպության կողմից կարծիք տրամադրելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Լ. Հովսեփյանը, առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Հ. Ստեփանյանը, գիտաշխատողներ Ա. Հովհաննիսյանը, Կ. Սահակյանը, Տ. Մանուկյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Նարեկ Մարտիրոսյանի «Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը 1908-1915թթ.» ատենախոսության թեման պատմագիտության ոլորտում ունի գիտական և արդիական նշանակություն: Աշխատանքը հնարավորություն է տալիս վերհանել այն ներդրումը, որ հայազգի պատգամավորներն ունեցել են Օսմանյան կայսրությունում սահմանադրական կարգերի հաստատման և ամրապնդման գործում, վերհանել ու

գնահատել հայ խորհրդարանականների ազգային խնդիրների հասցեագրմանն ուղղված գործունեության շերտերը:

Ն. Մարտիրոսյանի ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, որը գրված է գիտական պատշաճ մակարդակով՝ տարաբնույթ աղբյուրների ու գիտական գրականության բազայի հիման վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ներածությունում ատենախոսը ներկայացրել է ատենախոսության թեմայի արդիականությունն ու նորույթը, նպատակն ու առաջադրված հետազոտական խնդիրները, մեթոդաբանությունը, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը և օգտագործված գրականության տեսությունը: Ըստ հիմնավորման՝ ատենախոսության նորույթն այն է, որ ատենախոսը փորձում է վերլուծել և գնահատել 1908-1915թթ. օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների գործունեությունը, նրանց ներկայացրած խնդրագրերը, հիշատակագրերը, ելույթները, բանավեճերը, խորհրդարանի՝ արևմտահայության խնդիրներին վերաբերող օրինագծերը և նախաձեռնությունները: Ինչպես նաև 1908, 1912 և 1914թթ. խորհրդարանական ընտրությունների անցկացման կարգը, թույլ տրված ընտրախախտումները, ընտրակեղծարարությունը, հայ և այլազգի պատգամավորների հարաբերությունները, նրանց միջև առկա խորքային հակասությունների բացահայտումներն ու գնահատականները:

Ելույթ ունեցողներն անդրադարձան ատենախոսի օգտագործած աղբյուրներին և գիտական գրականությանը: Նշվեց, որ ատենախոսը ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրները, հայերեն, թուրքերեն, ռուսերեն, անգլերեն տարաբնույթ աղբյուրներ, գիտական գրականությունն ու ուսումնասիրությունները: Այդուհանդերձ, խիստ ցանկալի կլիներ օգտագործել և գրականության տեսության մեջ ներառել նաև թեմային առնչվող և վերջին տարիներին լույս տեսած թեմատիկ գիտական գրականությունը, ինչպես օրինակ՝

1. Türk Parlamento Tarihi, vol. 2, Ankara: TBBM Vakfı Yayınları, 1998
2. Sohrabi N. Revolution and Constitutionalism in the Ottoman Empire and Iran. Cambridge University Press, 2011
3. Rustow, Feroz Ahmad A. İkinci Meşrutiyet döneminde meclisler (1908-1918). Güneydoğu Avrupa Araştırmaları Dergisi (sayı 4–5), 2012
4. Kayalı Hasan, Elections and the Electoral Process in the Ottoman Empire (1876-1919). International Journal of Middle East Studies. 27 (3): 265–286, 1995

5. Elke Shoghig Hartmann, The “Loyal Nation” and Its Deputies. The Armenians in the First Ottoman Parliament, 2010. In book: The First Ottoman Experiment in Democracy (pp.187-222)
6. Ануш Ованнисян, «Дебаты по Армянскому вопросу в последнем османском парламенте (ноябрь-декабрь 1918г.)», Պատմաբանասիրական հանդես, հատոր 1 (204), Երևան 2017, էջ 40-51/Историко-филологический журнал, т.1(204), Ереван 2017, с.40-51
7. Üngör, U. Ümit. Seeing like a nation-state: Young Turk social engineering in Eastern Turkey, 1913–50. *Journal of Genocide Research*, *10*(1), 15–39, 2008
8. Üngör, U. Ümit. Geographies of Nationalism and Violence: Rethinking Young Turk ‘Social Engineering’, Demographic Engineering - Part I, 2008
9. Ümit Kurt, "Türk'ün Büyük, Biçare Irkı", 2. baskı - Eylül 2025
10. Ստեփանյան Հասմիկ, Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012:

Ելույթ ունեցողները անդրադարձան ատենախոսության առաձին գլուխների բովանդակությանը: Առաջին գլխում՝ (Սահմանադրական կարգերի վերահաստատումը Օսմանյան կայսրությունում) բաղկացած 3 ենթագլխից, հեղինակը ներկայացնում է երիտթուրքական հեղաշրջումը և խորհրդարանի ձևավորումը, հայ պատգամավորների քաղաքական ուղղվածությունը, Ադանայի կոտորածները և դրանց մեկնաբանումը Օսմանյան խորհրդարանում: Լուսաբանված են հայ պատգամավորների նախաձեռնությունների նկատմամբ երիտթուրքերի դիրքորոշումները: Կատարված է անդրադարձ ՀՅԴ-իթթիհաթ գործակցությանը: Ատենախոսության երկրորդ գլխում՝ (Օսմանյան խորհրդարանը 1910-1912 թթ.) բաղկացած հինգ ենթագլխից, ատենախոսը վերլուծում է վարչատնտեսական, սոցիալական, դատաիրավական խնդիրները և մարդու հիմնարար իրավունքների մասին քննարկումները: Քննարկվում է արևմտահայության զինակոչի, հողային հարցերը, սահմանադրական փոփոխությունները, ներքաղաքական ճգնաժամը և օսմանյան խորհրդարանի լուծարումը:

Երրորդ գլխում (Հայազգի պատգամավորների գործունեությունը 1912-1915 թթ.), որը բաղկացած է երեք ենթագլխից, ուսումնասիրվում է Հայկական հարցը և հայ պատգամավորների կառուցողական քայլերը դրա լուսաբանման հարցում, օսմանյան խորհրդարանի վերաբացումը 1914 թ., Առաջին աշխարհամարտի սկիզբը և հայ պատգամավորների դիրքավորումը խորհրդարանում, ինչպես նաև վերջիններիս գործունեությունը Մեծ Եղեռնի օրերին:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության հիմնական դրույթներն ու մտահանգումները:

Ատենախոսության մի շարք դրույթներ, եզրահանգումներ արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 8 հոդվածներում:

Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Այնուամենայնիվ, աշխատանքի հետ կապված առկա են մի շարք դիտողություններ և առաջարկներ: Մասնավորապես.

1. Չնայած, որ կատարվել է աղբյուրագիտական ուսումնասիրություն, կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե օգտագործվեին նաև հայերեն և հայատառ թուրքերեն մամուլի մի շարք պարբերականներ ևս, օրինակ՝ «Ադանա» լրագիրը, «Տաճար» շաբաթաթերթը, «Փարոս» ամսաթերթը, «Մանզումէ-ի Էֆքյար» օրաթերթը, «Ռահնիիմա» շաբաթաթերթը: Գրականության տեսության մեջ պետք է ավելի հիմնավոր ի ցույց դրվեին թեմայի ուսումնասիրվածության մեջ առկա բացերը և խնդիրները, որոնց հասցեագրմանն էլ կոչված է այս հետազոտությունը:
2. Ատենախոսը նշում է, որ 1908, 1912 և 1914թթ. խորհրդարանական ընտրությունների անցկացման կարգի, թույլ տրված ընտրախախտումների, ոչնչով չվերահսկվող ընտրակեղծարարության, հայ և այլազգի պատգամավորների հարաբերությունների, նրանց միջև առկա խորքային հակասությունների բացահայտումները աշխատանքի գիտական նորույթի մաս են կազմում, ցանկալի կլիներ անդրադառնալ նաև վերոնշյալ խնդիրների վերաբերյալ մի շարք առկա ուսումնասիրությունների, օրինակ՝ Kayali, Hasan. "Elections and the Electoral Process in the Ottoman Empire, 1876-1919." International Journal of Middle East Studies 27, no. 3 (1995): 265–86. Yumul, Arus. 2023. "The 1908 Ottoman Elections." The Historian 85 (1): 37–52. Satılmış Gökbayır. "Gizli Bir Cemiyetten İktidara: Osmanlı İttihat ve Terakki Cemiyeti'nin 1908 Seçimleri Siyasi Programı." Çankırı Karatekin Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi 3(1): 61-96. Olgun, Kenan. "Osmanlı Meclis-i Mebusanı'nda Ara Seçimler (1908-1912 Dönemi)." ATAM: Sayı: 82, 1-23, Mart 2012:
3. Հետազոտական խնդիրներում առկա են հարցադրումներ, որոնք, մեծ հաշվով, դուրս են հետազոտական բուն թեմայի շրջանակից (օրինակ՝ անդրադառնալ 1909թ. կիլիկիահայերի կոտորածի կազմակերպիչներին և իրագործողներին. . . , վերհանել վարչատնտեսական, դատաիրավական, զինակոչի և ժամանակավոր օրենքների էությունն ու իրական նպատակները, ցուցադրել իթթիհաթի իրականացրած ցեղասպանությունը, որին զոհ գնացին արևմտահայության և նրա գործող պատգամավորների

մի մասը): Հետազոտական խնդիրների մի մասը կարող էին ավելի հստակ ու թիրախային լինել, շատ դեպքերում լայն են ու ընդհանրական:

4. Կարծում ենք ավելի հիմնավոր կլիներ թեմայի ուսումնասիրության ժամանակագրական սահմաններ ընտրել 1908-1918 թվականները՝ 1908-1915 թթ. փոխարեն: Քանի որ օսմանյան խորհրդարանը գործել է երեք շրջափուլով և 1915 թվականից հետո ևս խորհրդարանում շարունակել են գործել հայ պատգամավորներ (օրինակ՝ Գեղամ Տեր-Կարապետյան, Վահան Փափազյան):
5. Թեմայի կիրառական նշանակություն բաժնում ատենախոսը նշել է, որ աշխատանքում ներկայացված դրվագները կարող են ծառայել որպես պատմական հենք՝ ՀՀ դիվանագիտական գերատեսչության ներկայացուցիչների համար: Այդուհանդերձ չի պարզաբանում, թե ինչպես և ինչ նպատակով կարող են դրանք ծառայել ժամանակակից դիվանագիտությանը: Կիրառական նշանակության հիմնավորումը համոզիչ չէ:
6. Աշխատանքում առկա են ոչ ճիշտ ձևակերպումներ և սխալ տառադարձումներ, ինչպես օրինակ՝ «ցուցադրել ցեղասպանությունը», Օսմանյան կայսրության վարչապետ, Ահմեդ Ռիզա բեյ (փոխարենը՝ Ահմեդ Ռըզա), թուրք պատմաբան Է. Զուրչեր (փոխարենը՝ Է. Ցյուրխեր, ով թուրք չէր), Յ. Պապիկյան (փոխարենը՝ Յ. Բաբիկյան), շերիաթ (փոխարենը՝ շարիաթ), Իսմայիլ Հագգը (փոխարենը՝ Իսմայիլ Հաքքը), ուլեմ՝ մահմեդական հոգևորական (փոխարենը՝ օրենսգետ, աստվածաբան):
7. Ատենախոսը նշում է, որ հայերը զրկված էին բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից, մինչդեռ, օրինակ, կայսերական բժշկական վարժարանի դասախոսական կազմի մեծ մասը բաղկացած էր հայերից (տե՛ս Արսեն Յարմանի աշխատությունը): Ինչպես նաև աշխատանքում քանիցս կրկնվում է այն միտքը, որ հայերը թուրքերենին չէին տիրապետում, առանց դրա աղբյուրագիտական հիմնավորման:
8. Աշխատանքում որոշ մասնագիտական եզրույթներ բացատրված չեն: Օրինակ՝ էջ 85-ում նշված խաֆիրության և ղշլախության հարկեր, էշրեֆ և այլն:
9. Հեղինակը 1908 թվականի իրադարձություններին անվանում տալիս օգտագործում է և՛ հեղաշրջում, և՛ հեղափոխություն եզրույթները: Կարծում ենք ճիշտ կլիներ նշել միայն ընդունելի տարբերակը:
10. Էջ 21-ում առկա է փաստագրական սխալ՝ երիտթուրքերի կողմից խորհրդարանական մակարդակում Հայոց ցեղասպանության

ծրագրավորված լինելու մասին: Մինչդեռ ցեղասպանության ծրագրումը երիտթուրքերի կողմից տեղի է ունեցել ավելի վաղ շրջանում և այլ մեխանիզմներով: Վերոնշյալը փաստող աղբյուրները բազմաթիվ են, օրինակ՝ Ռ. Սաֆրաստյանի «Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)» աշխատությունը:

11. Եզրակացություններում նկատվում է նաև ընդհանրական և նկարագրական բնույթի շարադրանք:

Վերը նշված դիտարկումները չեն ազդում ատենախոսության ընդհանուր որակի վրա, և այն կարելի է համարել օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների գործունեության ուսումնասիրությանը նվիրված հաջողված հետազոտություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Նարեկ Միքայելի Մարտիրոսյանի «Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը 1908-1915թթ.» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը բավարարում է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Լ. Հովսեփյան

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական արտուղար, պ.գ.թ. Ե. Հարությունյան

07.11.2025թ.